

13 Բայց զՅրահատն Կամսարական, սաստկապես վազս առեալ երիվարին իւրոյ՝ ընկենոյր, եւ հասեալ Պարսկացն, մինչդեռ էր հետիոտս՝ կալեալ ածէին առ Միհրան. զոր տեսեալ Միհրանայ՝ մեծապես ուրախացաւ: 14 Պատուհասեր զնա բանիւք խստութեան, եւ կապեալ¹ տայր պահել զգուշութեամբ. եւ ուր երթայր յաշխարհիս Յայոց՝ ընդ իւր շրջեցուցանէր: 15 Ընդ որս կալան եւ սեպուհ մի² Սիւնի, որում անուն էր Յագդ, եւ զայլս ոմանս ի Վրաց աշխարհէն:

ՅԵ. Իսկ զաւրաւարն Յայոց Վահան³ Մամիկոնեան երթայր առ վայր մի յամրագոյն տեղիսն Տայոց, ուր եւ սիւնքորք փախստեիցն Յայոց առ նա ժողովին եւ այլք յաւագ նախարարացն⁴ Յայոց. այլ Կամսարականքն երկութեան ընդ նմա իսկ էին միշտ, եւ անբակ ի նմանէ եւ միաբան: 2 Չորոց զհետ եկեալ Միհրան գնդաւ իւրով եւ ջանայր կամ սպանանել պատերազմաւ, եւ կամ ունել հնարիւք, եւ կամ հաւանեցուցանել եւ նուաճել:

3 Եւ էր բանակ սաստկութեան զաւրուն Արեաց ի գեաւոյն որ անուանի Դու, ի սահմանակցութեան Պարսից եւ Հռոմոց⁵. եւ զաւրաւարն Յայոց Մամիկոնեանն Վահան մերձ ի նա իբրեւ երկուք հրասախաւք, ի գեաւոյ մի որ կոչի Մկնառինճ, արամբք որպէս թէ հարիւրովք եւ թերեւս սակաւութեւ կամ յոլովիւք: 4 Եւ Միհրան այնչափ հազարաւքն առ նա բանակեալ էր մաւտ, եւ տեղին ուր զաւրաւարն Յայոց Վահան Մամիկոնեան էր՝ յիշխանութեանն Պարսից թագաւորին էր: 5 Եւ այնչափ սաստկապէս զեղեալ էր Աստուծոյ զմեծ շնորհ զաւրութեան իւրոյ ի վերայ քաջի առն Վահանայ Մամիկոնէի, զի ի մէջ այնչափ բազմութեան գնդի եւ ի զաւրաւոր քաջորերոյ՝ դողացեալ սարսեալ կայր Միհրան գնդաւն, փակեալ ընդ երկիւղագին ահիւ վերնոյն, եւ չիշխեր դիմել ի վերայ եւ սպանանել զորս կամեր⁶, եւ հալածել եւ կորուսանել⁷ զմնացեալ փախստեայսն. այլ բանիւ ողորբանաց պատգամաւորէր ընդ նմա հանապազաւոր ի խաղաղութիւն, ասելով, թէ «Մի՛ կորնչիր, եւ յարթայից արթայի⁸ ի ծառայութենէ մի՛ ելաներ, եւ զաշխարհս Յայոց մի՛ տար ի վատնումն. ի հնազանդութիւն եկ թագաւորին, եւ ես միջնորդ լինիմ. քանզի վասն իւրոյ բարերարութեան սիրէ զիս, եւ բանից իմոց լսէ. եւ ես ա-

1 Ձ. նախ՝ կապեալ, ապա՝ վերջին ա-ն բերած

2 ՁԱտ. ընդ որս եւ կալան սեպուհ մի

3 Ձ. զօրավարին (ի-ն յետոյ աւելացրած) հայոց վահանայ

4 ՏՏ. այլք ի նախարարացն

5 Ատ. հռոմոց. Ձ. հռոմովոց

6 ՏՏ. զոր կամեր

7 Ձ. կորուսել

8 Ձ. յարթայից արթայե